2/26.1/14875

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«05» 04 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ- 0070-21

Ձեռնարկողը՝ *«Գազոյլ» ՍՊԸ*
Լոռու մարզ Գոգավան համայնք

Գործունեությունը՝ *Սարչապետ համայնքի Գոգավան բնակավայրի 1-ին փողոցի թիվ 10/5 հասցեում նախատեսվող բազմավառելիքային լցակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն*
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝

Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0070-21

«05» 04 2021թ.

Լոռու մարզի Սարչապետ համայնքի Գոգավան բնակավայրի 1-ին փողոցի 10/5 հասցեում նախատեսվող բազմավառելիքային լցակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Գազոյլ » ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/
Գործունեության տեսակը՝	Բ կատեգորիա
Տեղարման վայրը՝	Լոռու մարզի Սարչապետ համայնք Գոգավան գյուղի 1-ին փողոցի 10/5

Ներածական մաս. «Գազոյլ» ՍՊ ընկերության կողմից Լոռու մարզի Սարչապետ համայնքի Գոգավան բնակավայրի 1-ին փողոցի 10/5 հասցեում նախատեսվում է բազմավառելիքային լցակայանի կառուցում:

Համաձայն գնահատման հաշվետվության և աշխատանքային նախագծերի՝ նախատեսվող բազմավառելիքային լցակայանը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 8575քմ ընդհանուր մակերեսով տարածքում՝ Լոռու մարզի Սարչապետ համայնքի կողմից տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի դ) ենթակետի հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվում է «Գազոյլ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի հասարակական նշանակության չկառուցապատված տարածքում կառուցել բազմավառելիքային՝ բնակավայրերի ավտոգազալիցքավորման ճնշակայան, հեղուկ գազի լիցքավորման կայան, հերթ

վառելիքի լիցքավորման կայան, և էլեկտրոավտոլիցքավորման վահանակ: Առաջարկվող նախագծով բնական գազի ավտոգազալիցքավորման ճնշակայանի շահագործման համար նախատեսված է մեքենայական մասնաշենք. վարչական և հասարակական սպասարկման նշանակության մասնաշենքեր, որոնք ներառում են սպասասրահը, հասարակությանը և սպասարկող անձնակազմի համար սանհանգույցներ, հասարակական սպասարկման՝ սրճարան, առևտրի սրահ և այլն, ինչպես նաև օպերատորական սենյակը:

Նախատեսվող գործունեության տարածքում և մերձակայքում պատմա-մշակութային, բնության հուշարձաններ, հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Բոլոր նոր մասնաշենքերի կառուցումը իրականացվելու է ե/բ կրող կոնստրուկցիաներով, քարե պարփակող պատերով: Մեքենայական մասնաշենքի և լցասյուների ծածկերը նախատեսված է իրականացնել մետաղական թեթև կոնստրուկցիաներով:

Բնական գազի լցասյուների ծածկոցը իրենից ներկայացնում է հատակի նիշից 5.0մ բարձրությամբ թեթև կոնստրուկցիաներից ծածկ, որի հատակագծային լուծումը իրականացված է 4.00մ առանցքային հեռավորությամբ, 5.65 մ երկարությամբ և 2.0 մ բարձրությամբ, միմյանց նկատմամբ զուգահեռ իրականացված, միաձույլ ե/բ 9 հատ բաժանարար պատերից:

Ճնշակայանը ե/բ կրող կոնստրուկցիաներով 13.0 x 9 մ արտաքին չափերով կարկասային շինություն է: Բոլոր շինությունների պարփակող պատերը իրականացվում են ուղիղ կտրվածքի տուֆ քարերի շարվածքով , իսկ ճնշակայանի պարփակող պատերը 200մմ հաստությամբ:

Տանիքը՝ միաթեք է, ծպեղնակավարամածային կոնստրուկցիաներով, ծածկված տանիքի կոմինդրատիպ փոշեներկված թիթեղով: Ջրահեռացումը արտաքին է և կազմակերպված:

Նախատեսվում են մոնտաժել չորս հատ երկփողանի բնական գազի լցասյուներ մեկ ընդհանուր մետաղական ծածկով, ստորգետնյա գազի կուտակիչ հոր V=400լ տարողությամբ:

Հեղուկ գազի լիցքավորման կայանի շահագործման համար նախատեսված է մեկ հատ երկփողանի բաշխիչ, ինչպես նաև V=10 խմ տարողությամբ ստորգետնյա հեղուկ գազի գազամբար:

Հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի շահագործման համար նախատեսված է մեկ հատ չորս փողանի հեղուկ վառելիքի լցասյունակ, (որից երեք հատը բենզին, իսկ մեկ հատը դիզելային վառելիքի համար), ինչպես նաև չորս հատ 10խմ տարողությամբ հեղուկ վառելիքի տարաների համար հոր: Նախատեսվում է նաև ձայնային և լուսային ազդանշանային համակարգերի տեղադրում: Հակահրդեհային պաշտպանությունը իրականացվել է հակահրդեհային հիդրանտների միջոցով: Տարածքում իրականացվելու է շանթապաշտպանություն:

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ ЕРЕВАНСКИЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ ՀԿ
RA YEREVAN "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Գազամատակարարումը Q=630խմ/ժամ ծախսով համաձայն տեխնիկական պայմանի իրականացվելու է «Գոգավան» անցակետը սնող D=76մմ տրամագծով վերգետնյա գործող գազատարից: Նախագծային բազմավառելիքային կայանի սանիտարական հանգույցների և հակահրդեհային ջրի միացումը տրված է Վեոլիա ջուր ընկերության գործող Φ-100մմ ջրատարին: Ջուրն օգտագործվելու է կենցաղային և կոմպրեսորների համակարգի հովացման նպատակով: Հակահրդեհային ցանցի հաշվարկային պահանջվող ջրի քանակության համար, անհրաժեշտ է նախատեսել ջրի պաշարային ծավալ՝ 50մ^3 տարողությամբ: Տարածքում կոյուղու ցանցը բացակայում է: Կայանում կառաջանան միայն կենցաղային կեղտաջրեր, որի համար նախատեսված է անջրթափանց սեպտիկ հոր: Կեղտաջրերի դատարկումը հորից կատարվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ կենցաղային և շինարարական աղբի տեսքով: Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է հողային աշխատանքների հանույթ և ետլիցք՝ 4320 խմ: Աղբահանությունը կատարվելու է պայմանագրային հիմունքներով:

Հողային աշխատանքների ժամանակ կհեռացվի մոտ 480 մ^3 բուսահող, որը կառանձնացվի գրունտից, կպահեստավորվի և կտնօրինվի ՀՀ կառավարության 02.10.2017 թ N 1404-Ն պահանջներին համապատասխան: Այս միջոցառման շրջանակներում բերրի հողը կհանվի, կտեղափոխվի տարածքի հարավային մաս՝ որտեղ նախապես կտոփանվի հողածածկը, կկազմակերպվի արգելափակող սահմանազատիչների կառուցում և ծածկ: Աշխատանքների ավարտից հետո բերրի հողը կօգտագործվի տարածքի բարեկարգման և կանաչապատման նխատակով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է ԱԳԼՃԿ-ի 2654քմ մակերեսով տարածքի կանաչապատում և բարեկարգում՝ անցուղիներ, սիզամարգեր ասֆալտապատ երթևեկելի գոտիներ: Ոռոգման նպատակով ջուրը կբերվի ավտոցիստեռներով՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, թափոնների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎՆԱՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ
РА ЕРЕВАН
ՀՈՒՍԱ
ОНЗ
SNCO

– շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանում,

– սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու նպատակով,

– շինարարական աղբի կուտակում շինարարության փուլում ջրային ռեսուրսն աղտոտումից պահպանելու նպատակով,

– շինարարական տեխնիկայի սպասարկում և կարգաբերում շինհրապարակից դուրս՝ համայնքի տեխսպասարկման կայաններում,

– շինարարական նյութերի և քսայուղերի պահեստավորում բետոնապատ մակերեսների վրա՝ յուղերի տարածումը կանխարգելելու նպատակով,

– շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և շինարարությանն առնչվող նորմերի պահպանում և այլն:

Շահագործման փուլում հեղուկ գազի, բենզինի և դիզելային վառելիքի լիցքավորման ընթացքում կառաջանան ածխաջրածինների արտանետումներ:

Բնական գազի լիցքավոման ընթացքում արտանետումներ չեն նախատեսվում, քանի որ բոլոր խողովակները միացած են ճնշակների ներքաշման գծին և գազի բոլոր մնացորդային քանակները անմիջապես ներքաշվում են ճնշակի մուտք:

Ածխաջրածինների տարեկան արտանետումները կկազմեն մոտ 0.53 տ:

Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել են մթնոլորտում դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ և արդյունքները համեմատվել են սանիտարական նորմերի հետ:

Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են համակարգչի վրա, «Էռա» ծրագրով: Ըստ այդ հաշվարկների աղտոտվածության առավելագույն մակարդակը գտնվում է թույլատրելի նորմերի սահմաններում

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվել է՝ շինարարական աշխատանքների փուլում՝ 36600 դրամ, շահագործման փուլ՝ 6700 դրամ

Պատճառաբանական մաս

Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են քաղաքաշինության ու անշարժ գույքի կադաստրի կոմիտեների, տարածքային կառավարման,ենթակառուցվածքների, առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունների, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները: Գնահատման հաշվետվության լրամշակման ընթացքում հաշվի են առնվել ստացված դիտողություններն ու առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Լոռու մարզի Սարչապետ համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունության վերաբերյալ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒ ԿՈՄԻՏԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO * РА ГЕРЕВАНСКИЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ. ГНО * РА YEREVAN ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER. SNCO

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց անհնարինության դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել ՀՀՇՆ IV-11.05.02-99 շիննորմերի և 2005 թ. դեկտեմբերի 22-ի «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N2399-Ն և 2008թ. օգոստոսի 28-ի «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N1101-Ն ՀՀ կառավարության որոշումներով և 2014թ. հոկտեմբերի 14-ի, «Քաղաքաշինություն. Քաղաքների և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» հոդվածով հաստատված ՀՀ Քաղաքաշինության նախարարի N263-Ն հրամանով և ապահովել «Հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում սանհանգույցներին առաջադրված պահանջները և շինարարական նորմերը» և դրանց հիման վրա հայտով նախատեսված լուծումները:

3. Շահագործման փուլում սահմանված կարգով Շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնել բազմավառելիքային կայանի սահմանային թույլատրելի արտանետումների նախագիծը և ջրօգտագործման և ջրահեռացման անհատական նորմերը:

4. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման,ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Գազոյլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Սարչապետ համայնքի Գոգավան բնակավայրի 1-ին փողոցի թիվ 10/5 հասցեում նախատեսվող բազմավառելիքային

ՀՀ ԲՆՊՈՒՆ ՍՏԳԱԿԱՆ ՍՊԵՐՏԻԶՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ • ENVIRONMENTAL EXPERTISE CENTER • ЦЕНТР ЭКОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ • РА ЕРЕВАН • YEREVAN • ЕРЕВАН • 02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

լցակայան կառուցելու շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝ Յու.Մատինյան